Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի ղեկավարի
01 նոյեմբերի 2018 թվականի թիվ 114 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին

ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն

Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2018 թվականի նոյեմբերի 23-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Զառիթափի համայնքապետարանի աշխատակազմ հետևյալ հասցեով՝ բնակավայր Զառիթափ 3 փողոց, 15 շենք, հեռ. +374282 91-5-07:

Դիմումների տրման վերջնաժամկետն է՝ 16/11/2018թ.:

Դիմող քաղաքացիները Զառիթափի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,

բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,

դ/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: